


ԱՇՈՏ ՇԱՅՐՈՆ



ԱԼԼՈ՛
ԼՍՈՒՄ ԵՐ,
ՄԵՆՔ ՀՅՈՒՄՈՒՄՈՒՄՆ
Ե ՆՔ...

ՊՈՆՍ
ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1938
Յ Ե Ր Ե Կ Ա Ն

1895

1895

1895

1895

1895

1895

ԱՇՈՏ ՇԱՅՐՈՆ

ԱԼԼՈ՛՛, ԼՍՈՒՄ ԵՔ,
ՄԵՆՔ ԴՅՈՒՄԻՍՈՒՄՆ ԵՆՔ...

Պոեմ պատանիների
համար

A 23672 7326
" 27932
9264



ՊԵՏՏՐՍ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1888



ՅՈՐՏՐՈՒՄԻՆ ՄԻՈՒՅՅԱՆ ԱՏԱԻԲՆՅԱՆ
ՔԵՎԵՆԱԽՈՒՂԳ, ԲԱՉԱՐԻ ԸՆԿԵՐ
ՈՏՏՈ ՅՈՒՄԵՎԻԶ ԾՄԻՂՏԻՆ:

1

ՅՅՄԻՅ-ԼԵՅՏ Է 1907 թ.

Մա մեր լերկիրն ե,
Գիտե՞ք, շատ հին ե:
Յերկիրը խնձոր՝
Վրան՝ սա՛ր ու ձոր,
Վրան՝ հող ու հանք,
Անտձու, դաշտ ու հանդ,
Ովկլանն անհատակ,
Յերկի՛նք կապուտակ,
Լճե՛ր բլուրեղյա,
Գետե՛ր վարարուն,
Անձրև ու լեղրամ,
Ձմե՛ռ ու գարո՛ւն...

2

Դառնում ե, դառնում
Յերկիրը կլո՛ր,
Շրջան ե լանում
Արևի բուրբ:
Տարին անցնելիս
Նա հեռ ե դալիս...
Պատլտ ե անվերջ,
Անհուն լերկնի մեջ:
Բլուր աստղերին կից,
Մեր շվաքի տակ
Լուսինն ել դրկից՝
Փաղբիկ մի գնդակ...
Յեւ միշտ միասին

Անցնում են կարգով,
Յերկիր ու լուսին՝
Մեր տիեզերքով:
Տեր դարձան մարդիկ
Ծովերին անթիվ,
Հսկա հողերին
Մեր լերկրագնդի:
Բնութլուծը մեծ
Նրան լենթարկվեց...

3

Բայց մնում եր դեռ
Հեռու մի բեվեռ,
Յերկնքի տակին
Մի անհայտ անկյուն.
Յեվ մարդու կամքին
Այն չեր լենթարկվում:
Բեվեռը անհայտ՝
Սառցադաշտ և հարթ:
Յերկու կիսագունդ
Բաժան ծովերով,
Նրանց արանքում
Խիստ սառուլցներով
Մի ուղի կար փակ՝
Անհայտության տակ:
Այնտե՛ղ չար և խիստ
Սառուլցն եր հանգչում,
Յեվ բուքն անհանգիստ
Վտռնո՛ւմ, շառաչո՛ւմ:
Հաստ զրահ հազած
Սառուլցների տակ,
Ովկյանն և պառկած

Քոր ու անհատակ...
Հողերն ել հագած
Մուշտակը փափուկ,
Մառցի տակ պառկած
Ննջում են սաքուկ:
Յե՛վ վորքա՛ն—վորքա՛ն
Շատ կղզիներ կան:
Այդպիսի կղզիք
Քարտեզի վրա
Չեն լեղել, չկան:
Անմարդ, անբնակ
Մառել են մենակ...
Արևը անուժ
Շողում է անուշ:
Արևն աննման,
Հեքլաթի նման
Լույսեր է վառում,
Են սառ աշխարհում:
Դաշտերը սառցի
Փռվում են անձիր,
Փայլում են պես—պես,
Հալելի վորպես,
Շողում են հանդարտ,
Վորպես ադամանդ:
Դաշտ և հորիզոն
Լցվում են լույսով,
Գուլներ են ցանվում
Ու ծիածանվում:
Իսկ լերը հլուսիպում
Գիշերն է գալիս,
Քավարն է հլուսվում
Որեր ու ամիս:

Ստովարը տխուր
Իջնում ե հավետ,
Յեվ բուքն ե խաղում
Սառուլցների հետ...

4

Յեվ վորքան մարդիկ
Կարտը սրտին
Հյուսիս գնացին,
Անդարձ՝ մնացին:
Անցլալ դարերից,
Են հին աշխարհից
Արդյոք սև հիշել,—
Դեվիս, Ֆրոբիշեր,
Բաֆֆին ու Գուլգան
Վոր շատ մեծ հուսով
Յերկրից հեռացան
Ու լետ չդարձան:
Վորքան թանկագին
Արժեք ե ընկած
Սառցի հատակին—
Ու թաղված անդարձ:—
Շողշողուն, պալժան,
Վոսկի ու արծաթ,
Պլատին ու լերկնիթ,
Քարածուխ ու նավթ,
Արճիճ ու աննգ
Անհայտ լերկնի տակ:
Յեվ լեթե բացեն
Բևեռը հպարտ,
Կգտնեն գանձեր՝
Թաղված, սառցապատ...

Կբանան ուղի
Ու կարճ ճանապարհ,
Աշխարհից—աշխարհ
Անցնելու համար...
Ու սրա համար,
Զգտել են համառ
Դեպ բևեռն ի վե՛ր,
Քանի քանխոսներ...
Յեվ հիշենք լեթե՛
Դեպքեր անցյալից,
Մեր աչքերի դեմ
Կկանգնեն նորից—
Խիզախներ ալնքան,
Վոր հիմա չկան:

Անցել են վտարո՛վ
Նավ ու սահնակո՛վ,
Մենակ են անցե՛լ
Զուլդո՛վ, խմբովի՛ն,
Ու գոհ են դարձել
Նման Սեդովի՛ն,
Վոր չափեց լերկար
Հյուսիսյան ուղին,
Բայց վերջը ընկավ
Սառուցե հողին:
...Նորիլեն անա՛,
Յերկնի արձակով
Թռիչքն իր արավ,
Բուքն իր հորձանքով
Արդելքներ դրավ՝
Ու ցած տապալեց
Յերկնի նավը մեծ:
Ընկա՛ն... մնացի՛ն,

Անհայտ սառուցին...
Նրանք մեն-մենակ
Անլուս, անճրագ,
Մահու գիրկն ընկան,
Մինչև վոր լեկան,
Փրկեցին կորած,
Մարդկանց մոլորած:
Ու նորից մնաց
Բեվեռը անանց...
Անցյալի որսք
Ո՞ւմ հիշել արդյոք...
Պիրի, Ամունդսեն,
Երիկսեն, Նանսեն,
Սեդո՛վ, Բլուսե՛լով,
Հայանի Ռուսանո՛վ:—
Յե՛վ վորքա՛ն-վորքա՛ն
Մե՛ծ անուններ կան:
Ձգտեցին նրանք
Յերազ բեվեռին,
Անլուս, անկրակ,
Այդ հեռուներին:
Ամեն գնալիս,
Բևեռը մարդուն
Դասեր եր տալիս
Ու խիստ խրատում:

*
*
*

Մ.ն աշխարհը հի՛ն—
Հաղթել անզոր եր,
Բեվեռը կրկին
Մե՛ծ ու հզոր եր...

Անցան որերը՝
 Մարդիկ ու գործեր,
 Յեկան նորերը
 Ուղեցին փորձել...
 Յեկան լենինյան
 Ծիծաղկոտ խանդով,
 Յեկան ստալինյան
 Ցասկոտ լեռանդով,
 «— Այդ մե՛նք կկազմենք
 Ծրագիր լերթի,
 Գնանք—կբազմենք
 Յերկրի գաղաթին»:
 Ասացին նրանք,
 Սրտերով կրա՛կ,
 «— Մեզ մոտ սլացիկ
 Մտքի վառ լուսե՛ր,
 Մեզ մոտ գեղեցիկ
 Խորհրդալին սե՛ր...
 Այդ մենք ենք ձգտում,
 Խինդը մեր հոգում՝
 Դեպի՛ դարերը,
 Դեպի՛ ապագան,
 Դեպի՛ արևը՝
 Վտակեշող ներկան:
 Միթե՞ կզիջենք
 Ու չենք լինի՛ խիստ,
 Մեզ հաղթողը չե՛
 Բուքն անհանգիստ:
 Թո՛ղ լողան նավեր
 Միշտ դեպի բեզեռ...

Կամբանանք ամուր՝
Դեմ դիմաց քամուն:
Հլուսիսը Մառցե՛—
Մենք պիտի սանձենք:
— Այդ մարդն է անցել
Անապատ ու ծո՛ւլ,
Մարդն է ստեղծել
Կյանքը ժպտացող:
Ել ինչու մնա
Իր գործը թերի,
Մենք պիտի գնանք,
Հասնենք բեվեռին»:

6

Ու մի որ անա՛,
Յերկիրնքը լելան
Բազեները մեր,
Յերկիրնքը լելան
Ամպերից ել վե՛ր,
Դեպի հորիզոն
Սիրուն լերիզով,
Թե՛վ ավին անցան—
Ու անտես դարձան...

* * *

Թռչում են անաս՛
Կրճքերով վահան,
Թե՛վերով ամուր,
Առաջ են տանում
Մեր Խորհրդալին
Կուռ կամքը դարի՛:
Շմիդտի նման

Ձկա աշխարհում,
Արշավն աննման՝
Ալդ նա լե վարում:
Յեվ այդ ալեզարդ
Պետը արշավի,
Տեսել ե հազար
Բուք ու արհավիրք...
Թո՛ղ փշի քամին,
Թո՛ղ սուլի սաստիկ,
Ի՞նչ ուժ պիտ լինի,
Վոր նրանց սաստի...
Ձկա՛ վոչ արգելք,
Վոչ ել վհատում,
Յերբ կամք կա և խելք՝
Վատա՛ն ու հատո՛ւ:
Թռչում են բեվեռ
Դեպի խոր ձմեռ,
Ուր չկա գարո՛ւն,
Ամա՛ռ ու աշուն,
Ուր չեն դալարում
Ծառերը նախշուն:
Ուր չկա անտա՛ռ,
Ձկա՛ քո՛ւ ու քար,
Ձկան բուրացող
Վարդեր արթնացող,
Առվակներ հոսուն,
Լեզվանի, խոսուն:
Մոռուլցներն անա՛,
Վորպես կուռ վահան,
Անպարտ բևեռ՝
Դարե՛ր ու դարե՛ր
Իրենց արանքում

Պահում են թագուն:
Յեզ բարձր—բարձր՝
Փոխում է թանձր
Մշուշող կաթը,
Տակոյն է անցել
Հոոր գագաթը,
Թռչում են սիրով
Ամպի ուներով,
Մեր հերոսները
Հոոր ու արի՛,
Մեր հերոսները
Պայծառ աշխարհի:
Նրանք չեն թողնի
Մեծ գործը թերի:

7

Ու վոչինչ չկար,
Վոր գապեր նրանց:
Յեզ նրանք լեկան
Իջան սրընթաց—
Հաղթութիամբ խնդուն,
Հաջողվեց մարդուն
Անհաս բեռը՝
Դարձնել մերը...

* * *

Իջան դեպի ցած,
Դեպ բեվեռը խոր,
Սառուլցը զնգաց
Իր ցուրտ լերախով:
«—Ի՞նչ լավ է, ասին,
Հասանք հյուսիսին:
Բեվե՛ռ, բարև քեզ,

Ասա, ինչպե՞ս ես:
Այստեղ կնստենք,
Յեթե բարկանաս
Մենք քեզ կսաստենք,
Դու կհասկանաս,
Վոր թույլ ես արդե՛ն
Ուժեղների դե՛մ,
Կնստենք ամուր
Սառույց կհերկենք,
Կլծենք քամո՛ւն,
Ուրախ կլերդենք:
Վրանի դիմաց
Կլնի քամաղա՛ց,
Կարգին բնակարան,
Յեվ ռազիոկայան,
Նույնիսկ թանգարան,
Անգամ տնկարան:
Իսկ զագաթին քո
Կենարոնում ուղիդ,
Մենք այնպես շուքով՝
Քո սառցե հողին
Կցցենք դրոշ,
Ուր պարզ ու վորոշ
Վոսկե տառերով
Կգրենք սիրով.
— Իմաստուն կլանքի
Խոհերով դարի,
Մեծ հալբենիքի
Հերոսներն արի
Նստել են համառ
Հեռավոր կետում,
Գիտության համար

Գալիք են կերտում...
 Գիտութեան, ուժի՛,
 Ստալինյան սիրո,
 Մարտիկներն են ժիր
 Խնդուն հույսերով:—
 Ստալինյան կամքով
 Հլուսիս գնացին,
 Խնդութեամբ, փառքով *
 Բեվեռը բացին:

* *
 *

Ասին ու արին...
 Յեզ վողջ աշխարհին
 Հայանեցին նրանք.
 — Բեվեռը առանք,
 Բեվեռը առանք...
 Ալլո՛... լսում եք,
 Մենք Հլուսիտումն ենք:

1987 թ.
 Յերեկան



Պատ. խմբ. Մկրտիչ Կորյուն
Տեխ. խմբ. Ան. Գասպարյան
Սըբազըիչ՝ Հ. Մանուկյան
Կոնարտ Սըբազըիչ՝ Մ. Մարտիկյան

Դյավլիտի լիազոր Ա—3051 Հրատ 4335

Պատվեր 1311. Տիրած 4000.

Թուղթ 62×94 Տղ. 1 մամուլ

Մեկ մամ. 30702. նիլ, Հեղինակային 3/4 մամ.

• Հանձնված է աշտաղբուքյան 10 դեկտ. 1937 թ.

Ստորադրված է աղաղբուքյան 31 դեկտ. 1937 թ.

Ֆինը—60 է.

Պետրոսաի տղարան, Յերեվան. 16նինի փող. 65.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003211

A $\frac{\text{II}}{23672}$

Գրե՛՛՛՛՛ 80 ԿՈՂ.

44.



ԱՏՈՒ ՏԱԻԲՈՒ
 ԱԼԼՈ՛! ՏԼՄՏԱԵՏԵ ?
 ՄՅ ՈՒ ՏԵՄԵՐԵ
 ԴԻՅ. ՏՏՐ. ԱՐՈՒ. ԵՐԵՎԱՆ

Դրո՛՛ 0401